Հավելված N 1
ՀՀ վարչապետի 2011 թ.
հոկտեմբերի 12 -ի N 963 - Ա
որոշման

Կ Ա Զ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱԼԱՐԻԱՅԻ ՆԵՐԲԵՐՈՒՄԸ ԵՎ ԱՐՄԱՏԱՎՈՐՈՒՄԸ ԿԱՆԽԱՐԳԵԼԵԼՈՒ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հ. Դարբինյան	- ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ (հանձնաժողովի նախագահ)
Ա. Վանյան	- ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի պետական հիգիենիկ հակահամաճարակային տեսչության պետ
Կ. Կոստանյան	- ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական ծրագրերի և որակի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար
Հ. Գալստյան	- ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի տարածքային կառավարման և զարգացման վարչության պետ
Վ. Կաժոյան	- ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմի միջազգային կազմակերպությունների վարչության պետ
Ա. Փարսադանյան	- ՀՀ զինված ուժերի ռազմաբժշկական վարչության պետ
Ի. Կոջոյան	- ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի սննդամթերքի անվտանգության բաժնի պետ
Ա. Վարդանյան	- ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմի ռազմավարության պլանավորման, մեթոդոլոգիայի և մոնիթորինգի վարչության պետ
Ա. Բաղդասարյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի տնտեսական զարգացման քաղաքականության վարչության պետ
Հ. Ղալաչյան	- ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի կենսառեսուրսների կառավարման գործակալության բուսական ռեսուրսների կառավարման բաժնի պետ

Ս. Մկրտչյան	- ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի ճարտարապետության վարչության պետ
Ժ. Ասատրյան	- ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի տնտեսության սոցիալական ոլորտի բյուջետային ընթացիկ ծախսերի ֆինանսական ծրագրավորման վարչության պետ
Ջ. Հարությունյան	- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի արտակարգ իրավիճակների քաղաքականության ծրագրերի վարչության աղետների բժշկության բաժնի պետ
Ռ. Սուքիասյան	- ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության պետ
Ա. Հովսեփյան	- ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետ
Վ. Մովսիսյան	- ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության բժշկական վարչության պետ
Ա. Սմբատյան	- ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության աշխատող
Ա. Ավագյան	- ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության «Ավիաբուժ» ԲԿ» ՓԲԸ-ի հակահամաճարակային ծառայության պետ
Գ. Ղուկասյան	- Առողջապահության համաշխարհային կազմակերպության հայաստանյան գրասենյակի վարակիչ հիվանդությունների ծրագրի համակարգող (խորհրդակցական ձայնի իրավունքով)
Լ. Պարոնյան	- ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի պետական հիգիենիկ հակահամաճարակային տեսչության վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների համաճարակաբանության բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի քարտուղար)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2011 թ.
հոկտեմբերի 12-ի N 963 - Ա
որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱԼԱՐԻԱՅԻ ՆԵՐԲԵՐՈՒՄԸ ԵՎ ԱՐՄԱՏԱՎՈՐՈՒՄԸ ԿԱՆԽԱՐԳԵԼԵԼՈՒ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետությունում մալարիայի ներբերումը և արմատավորումը կանխարգելելու միջգերատեսչական համակարգող հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) ստեղծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 17-ի նիստի «Հայաստանի Հանրապետությունում մալարիայի ներբերումը և արմատավորումը կանխարգելելու 2011-2015 թվականների պետական ծրագրին և Հայաստանի Հանրապետությունում մալարիայի ներբերումը և արմատավորումը կանխարգելելու 2011-2015 թվականների միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» N 23 արձանագրային որոշմամբ նախատեսված աշխատանքների համակարգման նպատակով:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

2. Հանձնաժողովի նախագահը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի առաջին տեղակալն է:

3. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են առնվազն յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ: Հանձնաժողովի նիստում որոշվում է հաջորդ հերթական նիստի օրը: Անհրաժեշտության դեպքում, հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ, կարող է գումարվել արտահերթ նիստ: Հանձ-

նաժողովի անդամն արտահերթ նիստ գումարելու առաջարկությամբ կարող է դիմել հանձնաժողովի նախագահին:

4. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

5. Հանձնաժողովի նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը:

6. Հանձնաժողովի նիստերին կարող են հրավիրվել պետական մարմինների՝ հանձնաժողովի օրակարգում ընդգրկված հարցերին առնչվող մասնագետները, ինչպես նաև գիտական, կրթական, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ՝ իրենց համաձայնությամբ:

III. ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

7. Հանձնաժողովի նիստերն անցկացվում են հանձնաժողովի նախագահի կողմից հաստատված օրակարգով: Հանձնաժողովի նախագահը որոշում է հանձնաժողովի նիստի անցկացման վայրը, օրը և ժամը: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ հանձնաժողովի նիստի օրակարգում ընդգրկելու համար կարող է նիստից առնվազն 15 օր առաջ հարց ներկայացնել:

8. Հանձնաժողովի օրակարգում նշվում են՝

1) հանձնաժողովի նիստի անցկացման վայրը, օրը և ժամը.

2) քննարկման ենթակա հարցերը.

3) քննարկվող յուրաքանչյուր հարցը զեկուցողի անունը, ազգանունը:

9. Հանձնաժողովի նիստերի օրակարգը և քննարկվելիք հարցերին վերաբերող մյուս անհրաժեշտ փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին են փոխանցվում նիստից առնվազն 10 աշխատանքային օր առաջ:

10. Հանձնաժողովի գործունեության կազմակերպչական-տեխնիկական աշխատանքներն ապահովում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմը:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

11. Հանձնաժողովի նպատակները՝

1) մալարիայի ներբերումը և արմատավորումը կանխարգելելու ծրագրի իրականացման գործընթացներին օժանդակելն է.

2) մալարիայի ներբերումը և արմատավորումը կանխարգելելու ծրագրի իրականացման գնահատումն է.

3) մալարիայի ներբերումը և արմատավորումը կանխարգելելու ծրագրի արդյունավետության բարձրացման վերաբերյալ առաջարկություններ մշակելն է:

12. Հանձնաժողովի խնդիրներն են՝

1) մալարիայի ներբերումը և արմատավորումը կանխարգելելու միջոցառումների, ինչպես նաև առաջնահերթությունների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը.

2) հանրապետությունում մալարիայի ներբերումը և արմատավորումը կանխարգելելու ուղղությամբ շահագրգիռ մարմինների համագործակցությունն ամրապնդելը.

3) մարզային մակարդակում, ինչպես նաև շահագրգիռ կառույցներում մալարիայի ներբերումը և արմատավորումը կանխարգելելու ծրագրերի ներդրման ապահովումը.

4) մալարիայի ներբերումը և արմատավորումը կանխարգելելու միջոցառումների դիտարկման, գնահատման և կատարված աշխատանքների տարեկան ամփոփումը:

13. Հանձնաժողովի գործառույթներն են՝

1) հանրապետությունում մալարիայի ներբերումը և արմատավորումը կանխարգելելու ուղղությամբ շահագրգիռ մարմինների համագործակցությունը համակարգելը.

2) մարզային մակարդակում (մարզպետների հաստատմամբ), ինչպես նաև շահագրգիռ կառույցներում (կառույցների ղեկավարների հաստատմամբ) մալարիայի ներբերումը և արմատավորումը կանխարգելելու ծրագրերի մշակումը և ներդրումը համակարգելը.

3) մալարիայի ներբերումը և արմատավորումը կանխարգելելու միջոցառումների դիտարկման, գնահատման և կատարված աշխատանքների մասին տարեկան զեկույցի պատրաստումը և հրապարակումը:

14. Հանձնաժողովը բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ կարող է ընդունել խորհրդատվական բնույթի որոշումներ:

V. ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

15. Հանձնաժողովի նիստերի արձանագրումն ապահովում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմը:

16. Նիստի արձանագրության մեջ նշվում են՝

1) նիստի անցկացման ամիսը, ամսաթիվը, տարեթիվը և վայրը, նիստն սկսելու և ավարտելու ժամերը.

2) նիստի օրակարգը.

3) նիստին մասնակցող, հրավիրված անձանց և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների անունները.

4) քննարկվող հարցերի, զեկուցումների և ելույթների հիմնական դրույթները.

5) ընդունված որոշումները, դրանց տարածման և (կամ) հրապարակման ձևերը:

17. Նիստի արձանագրությանն անհրաժեշտության դեպքում կցվում են քննարկված հարցերին վերաբերող նյութեր, այդ թվում՝ իրավական և այլ փաստաթղթերի (հայեցակարգեր, ռազմավարություններ, հաշվետվություններ և այլն) նախագծեր, գրավոր զեկույցների և ելույթների տեքստեր:

18. Հանձնաժողովի նիստի արձանագրությունն ստորագրվում է հանձնաժողովի նախագահի կողմից՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում:

19. Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները պահվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմում:

VI. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

20. Հանձնաժողովի նախագահը՝

1) նախագահում է հանձնաժողովի նիստերը.

2) հաստատում է հանձնաժողովի օրակարգը և ստորագրում հանձնաժողովի նիստերի արձանագրությունները.

3) լսում է հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների կատարման ընթացքի մասին հաշվետվությունները և տալիս ցուցումներ ու հանձնարարականներ.

4) որոշում է հանձնաժողովի նիստերին հրավիրվող անձանց կազմը.

5) իրականացնում է սույն աշխատակարգով սահմանված այլ լիազորություններ:

21. Հանձնաժողովի անդամն իրավունք ունի՝

1) ներկայացնելու հարցեր՝ հանձնաժողովի օրակարգում ընդգրկելու համար.

2) հանձնաժողովի նիստերի ընթացքում քննարկվող հարցերի վերաբերյալ ներկայացնելու բանավոր կամ գրավոր կարծիք.

3) մասնակցելու որոշումների ընդունման համար քվեարկությանը:

VII. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

22. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմը հանձնաժողովի նիստերի արձանագրությունները կամ արձանագրության քաղ-

վածքները նիստից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է հանձնաժողովի բոլոր անդամներին:

23. Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումները տեղադրվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության ինտերնետային կայքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ